ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/4.3.1-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 18-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար (դասընթացներ)»** 4.3.1 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար (դասընթացներ)»** 4.3.1 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «ՎԻՍՏԱԱ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» խորհրդատվական ՀԿ-ի,
- «ԹԱԹՅՈՍԱ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար (դասընթացներ)»** 4.3.1 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 3 (երեք) կազմակերպության՝

- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ»-ի,
- «ՎԻՍՏԱԱ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» խորհրդատվական ՀԿ-ի,
- «ԹԱԹՅՈՍԱ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ»** ՀԿ-ի հայտում՝

- պահպանված չէ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի վաղեմության պահանջը,

- մրցույթի հրավերի 2.4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պետք է ներկայացվեն նախկին փորձը հավաստող պայմանագրեր (ներառյալ հանձման, ընդունման ակտերը), և/կամ տեղեկանքներ, և/կամ այլ փաստաթղթեր – կցված են պայմանագրեր, սակայն առկա չեն հանձման-ընդունման ակտերը,

- ներկայացված ծրագիրը ամբողջությամբ չի համապատասխանում Հրավերի 2.4.1-ին կետով սահմանված պահանջներին, այդ թվում՝ չի ընդգրկում ՀՀ բոլոր մարզերը:

- **«ՎԻՍՏԱԱ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» խորհրդատվական ՀԿ**-ի հայտում՝

- մրցույթի հրավերի 2.4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պետք է ներկայացվեն նախկին փորձը հավաստող պայմանագրեր (ներառյալ հանձման, ընդունման ակտերը), և/կամ տեղեկանքներ, և/կամ այլ փաստաթղթեր – կցված են պայմանագրեր, սակայն առկա չեն հանձման-ընդունման ակտերը,

- ներկայացված ծրագիրը ամբողջությամբ չի համապատասխանում Հրավերի 2.4.1-ին կետով սահմանված պահանջներին, այդ թվում՝ չի ընդգրկում ՀՀ բոլոր մարզերը:

- **«ԹԱԹՅՈՍԱ» ՍՊԸ**-ի հայտում՝

- մրցույթի հրավերի 2.4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պետք է ներկայացվեն նախկին փորձը հավաստող պայմանագրեր (ներառյալ հանձման, ընդունման ակտերը), և/կամ տեղեկանքներ, և/կամ այլ փաստաթղթեր – կցված են պայմանագրեր, սակայն առկա չեն հանձման-ընդունման ակտերը,

- ներկայացված ծրագիրը ամբողջությամբ չի համապատասխանում Հրավերի 2.4.1-ին կետով սահմանված պահանջներին, այդ թվում՝ չի ընդգրկում ՀՀ բոլոր մարզերը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար (դասընթացներ)»** 4.3.1 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 3 (երեք) կազմակերպության՝

- «Սյունիքի տարածաշրջանիզբոսաշրջության կառավարման գրասենյակ»-ի,
- «ՎԻՍՏԱԱ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» խորհրդատվական ՀԿ-ի,
- «ԹԱԹՅՈՍԱ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար (դասընթացներ)»** 4.3.1 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____